ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-21-2/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 19.07.2021թ.
Ժամը 14[40]

Ի գիտություն՝ քանի որ հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության պետ, փոխգնդապետ Կ. Գրիգորյանը բացակայում է նիստից, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ նիստը նախագահում է ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սիմոնյանը:

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սիմոնյան,
ՀՀ ԶՈՒ ՊԳՎ ՈՒՆՏԱ բաժնի, պլանավորման և հաշվառման բաժանմունքի պետ, փոխգնդապետ Ա. Հալաջյան,
ՀՀ ԶՈՒ ՊԳՎ ՈՒՆՏԱ բաժնի, շահագործման և սարքավորումների նորոգման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ Լ. Արշակյան:
Բացակայում է՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության պետ, փոխգնդապետ Կ. Գրիգորյանը:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի ավագ մասնագետ Ս.Եսոյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-21-2/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ս. Եսոյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-21-2/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-21-2/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ս. Եսոյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-21-2/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1	«ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-21-2/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ

բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Ս. Եսոյան)

2.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը **www.armeps.am** կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-21-2/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ս. Եսոյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-21-2/1» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ է ներկայացրել 1 մասնակից.

Հ/Հ	Աշխատանքի անվանումը	չ/մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպության			Ծանոթություն
					անվանումը	գնային առաջարկները		
						առանց ԱԱՀ	ընդհանուր գինը	
1	Շարժական թիրախային բնագծերի կահավորում (Շարժական թիրախային բնագծի կահավորում (80մ))	լրակազմ	1	3 200 000	«ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ	6 240 000	6 240 000	Բանակցություն
2	Շարժական թիրախային բնագծերի կահավորում (Շարժական թիրախային բնագծի կահավորում (80մ))	լրակազմ	1	3 200 000	«ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ	6 240 000	6 240 000	Բանակցություն
3	Շարժական թիրախային բնագծերի կահավորում (Շարժական թիրախային բնագծի կահավորում (150մ))	լրակազմ	1	6 000 000	«ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ	11 700 000	11 700 000	Բանակցություն

3.2 Մասնակցի գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-21-2/1» ծածկագրով ընթացակարգին հայտ է ներկայացրել մեկ մասնակից՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները 19.07.2021թ. որոշեց նիստը կասեցնել և գների նվազեցման նպատակով 23.07.2021թ. ժամը 12:00-ին ՀՀ ՊՆ ԳԿ վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ: Նշված օրը և ժամին «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն ներկայացավ բանակացություններին և առաջարկեց հետևյալ նվազեցված գները՝ 1-ին չափաբաժնի մասով՝ 6 140 000 դրամ, 2-րդ չափաբաժնի մասով՝ 6 140 000 դրամ, իսկ 3-րդ չափաբաժնի մասով՝ 11 550 000 դրամ: Նշենք, որ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն ԱԱՀ վճարող չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-21-2/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ս. Եսոյան)

4.1 02.08.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-21-2/1» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի զ) պարբերությունը:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-21-2/1» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

4.3 Քանի որ ներկայացված գինը 3-րդ չափաբաժնի մասով գերազանցում է գնումն իրականացնելու համար նախատեսված նախահաշվային գինը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին), գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը վերը նշված չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ս. Եսոյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՇՁԲ-21-2/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Ա. Սիմոնյան

Գնահատող Ա. Հալաջյան

Գնահատող Լ. Արշակյան

Գնումները համակարգող՝ Ս. Եսոյան